



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 18

30-ը Նոյեմբերի 2016թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի Ալաշկերտի փողոց 2-րդ փակուղի թիվ 3 հասցեի 05-084-033-010 ծածկագրով հողամասի և շենք շինությունների նկատմամբ Գարուշ Հակոբի Արշակյանի ընտանիքի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Հաշվի առնելով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նշված տարածքներում: Դեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 2008թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով.

**Որոշում են՝**

1. Վերականգնել վերը նշված հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գարուշ Հակոբի Արշակյանի ծնվ. 10.12.1934թ., Լուսաբեր Ալեքսանի Արշակյանի ծնվ. 02.06.1939թ. և Ավագ Գարուշի Արշակյանի ծնվ. 27.03.1970թ. հողօգտագործման իրավունքը, շինության զբաղեցրած տարածքի և սպասարկման համար անհրաժեշտ 0,2879 հա հողամասի և դրա վրա կառուցված շենք շինությունների՝ բնակելի տան առաջին հարկ՝ ներքին մակերես օրինական կառուցված 131.55քմ, ինքնական կառուցված՝ 13.75քմ, երկրորդ հարկ՝ ներքին մակերես օրինական կառուցված 139.77քմ, ինքնական կառուցված՝ 13.37քմ, բաց պատշգամբ երկրորդ հարկ 7.95քմ, գոմ հացատուն ներքին մակերես 29.77քմ, ավտոտնակ ներքին մակերես 9.95քմ-ի նկատմամբ:

2. Շենք շինությունների մակերեսները ենթակա չեն ճշտման ԱԳԿ Մարտունու տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի քաղաքաշինության մասնագետի կողմից տրված հատակագծով:

4. Շինությանը տրամադրել Ալաշկերտի փողոց 2-րդ փակուղի թիվ 3 հասցեի հասցեն:

5. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը գրանցել Գարուշ Հակոբի Արշակյանի ընտանիքի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք շինությունների նկատմամբ և տրամադրել սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ՝



Ռ. Սիրականյան